ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ»
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

2019թ-ի հունիսի 3 -ի

Հիմնադիր ժողովի որոշմամբ

Նախագահ՝

Գոռ գևորգյան

Տպագրված է ընդամենը «2» օրինակ

Օրինակ 1

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ

«15» հունիսի 2019թ.

Գրանցման համար

211.171.1083489

Հարկ վճարողի հաշվառման համար

02280833

Հ. Գրիգորյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

2019թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Երջանկության ճանապարհ» բարեգործական հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց հասարակական միավորում է, որն ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ:

2. Կազմակերպության գործունեության սկզբունքներն են՝ օրինականությունը, խտրականության բացառումը, բարեխղճությունը, անդամության կամավորությունը, անդամների շահերի ընդհանրությունը, ինքնակառավարումը և հաշվետվողականությունը:

3. Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

4. Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության սահմանադրության, «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, Բարեգործության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ միջազգային պայմանագրերի, սույն Կանոնադրության հիման վրա և ինքնուրույն է որոշում իր կազմակերպական կառուցվածքը, գործունեության առարկան, նպատակները, ձևերը:

5. Կազմակերպության պաշտոնական լեզուն հայերենն է: Տարբեր լեզուներով գրված տեքստերի մեկնաբանությունից ծագած որևէ անհամապատասխանության դեպքում՝ հայերեն գրված տեքստը համարվում է որոշիչ:

6. Կազմակերպության անվանումն է.

1) հայերեն՝ «Երջանկության ճանապարհ» բարեգործական հասարակական կազմակերպություն,

2) ռուսերեն՝ «Дорога счастья» благотворительная общественная организация,

3) անգլերեն՝ «The Way of Happiness» charitable non-governmental organization:

7. Կազմակերպությունը հանդիսանալով ցերեկային խնամքի և ժամանցի կենտրոն իր աշխատանքային գործունեությունն իրականացնում է յուրաքանչյուր աշխատանքային օր՝ երկուշաբթիից ուրբաթ, ժամը 9:00-18:00-ն:

8. Կազմակերպության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, քաղաք Երևան, Նիզամի փողոց, 13 շենք, 33-րդ բնակարան:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

9. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակներն են՝

1) Աջակցել, պաշտպանել և ապահովել մտավոր խնդիրներ ունեցող անձանց՝ լիարժեքորեն և հավասարապես օգտվել մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից,

2) հնարավորություն ընձեռել մտավոր խնդիրներ ունեցող անձանց զարգացնել և օգտագործել իրենց ստեղծագործական, գեղարվեստական և մտավոր ներուժը:

3) իրականացնել մտավոր խնդիրներ ունեցող անձանց սոցիալական ինտեգրում՝ տվյալ անձի առողջության, բարեկեցության, նրա նկատմամբ հարգանքի, արժանապատվության և ինքնուրույնության համար նպաստավոր միջավայրում, որտեղ նաև հաշվի կառնվեն գենդերային ու տարիքային առանձնահատկություններով պայմանավորված կարիքները:

4) աշխատանքներ իրականացնել անձանց անհատականության, տաղանդի ու ստեղծագործական մտքի զարգացման, ինչպես նաև նրանց մտավոր ու ֆիզիկական կարողությունների զարգացման ուղղությամբ՝ օգտագործելով նրանց առավելագույն հնարավորությունները:

5) կազմակերպել՝ այցելություններ հոգևոր և մշակութային օջախներ՝ հնարավորություն ընձեռելով ծանոթանալու պատմամշակութային և հոգևոր արժեքներին, ինչպես նաև տարաբնույթ այլ միջոցառումներ:

6) ապահովել մտավոր խնդիրներ ունեցող անձանց համար ցերեկային խնամքն ու առօրյա զբաղվածությունը, դրանով իսկ նպաստելով տան անդամների զբաղվածությանը և աշխատանքային գործունեությամբ զբաղվելուն:

10. Իր նպատակներն ու խնդիրներն իրականացնելու համար Կազմակերպությունը համագործակցում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային և օտարերկրյա համանման կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետությունում գրանցված այլ կազմակերպությունների հետ:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ, ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

11. Կազմակերպությունն որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

12. Կազմակերպությունն իրավունք ունի իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրականացնելու ձեռնարկատիրական գործունեություն, այդ նպատակով տնօրինելու իր գույքը և գործունեության արդյունքները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստեղծելու առևտրային կազմակերպություն կամ դառնալ նրա մասնակից:

13. Կազմակերպությունը վարում է ձեռնարկատիրական գործունեության առանձնացված հաշվառում՝ դրա վերաբերյալ տեղեկությունները ներառելով օրենքով նախատեսված հաշվետվություններում:

14. Կազմակերպության կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ստացված շահույթը, Կազմակերպության միջոցները օգտագործվում է միայն կազմակերպության կանոնադրական նպատակների ուղղությամբ:

15. Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեությունից ստացված շահույթը նրա անդամների միջև չի բաշխվում:

16. Կազմակերպության գույքի ձևավորման աղբյուր կարող են լինել՝

1) կազմակերպության անդամների ներդրումները,

2) Կազմակերպության ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները,

3) իր ստեղծած կամ իր մասնակցությամբ այլ առևտրային կազմակերպությունից ստացված միջոցները,

4) դրամական մուտքերը պետական բյուջեից,

5) նվիրաբերությունները, այդ թվում՝ դրամաշնորհները,

6) հանգանակությունները,

7) օրենքով չարգելած այլ միջոցներ:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

17. Պետությունն օրենքով սահմանված կարգով ապահովում է Կազմակերպության իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

18. Պետությունը կազմակերպությանը օգնություն և աջակցություն է ցուցաբերում օրենքով և իրավական այլ ակտերով նախատեսված դեպքերում ու կարգով:

19. Կազմակերպությունը իր կամ պետական մարմինների ու տեղական ինքնակառավարման մարմինների նախաձեռնությամբ կարող է պայմանագրային կամ փոխադարձ համաձայնության այլ ձևով ամբողջությամբ իրականացնել կամ մասնակցել պետական մարմինների ու տեղական ինքնակառավարման մարմինների սոցիալական, առողջապահական, կրթական, դաստիարակչական, մշակութային, մարզական ծրագրերին և այլ միջոցառումների:

20. Պետական մարմիններին և տեղական ինքնակառավարման մարմիններին և նրանց պաշտոնատար անձանց արգելվում է միջամտել կամ խոչընդոտել Կազմակերպության օրինական գործունեությանը:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԴԱՌՆԱԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

21. Կազմակերպության անդամ կարող է դառնալ 18 տարին լրացած ցանկացած ֆիզիկական անձ, ով ընդունում է Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված նպատակները և ցանկանում է մասնակցել նրա գործունեությանը:

22. Կազմակերպության անդամ դառնալու ցանկություն ունեցող անձը գրավոր դիմում է Կազմակերպության գործադիր մարմնին՝ Նախագահին:

23. Կազմակերպության անդամության մեջ ընդունելու հարցը լուծում է Նախագահը՝ սույն Կանոնադրության հիման վրա:

24. Կազմակերպության անդամը ցանկացած ժամանակ ազատ է դուրս գալու Կազմակերպությունից: Կազմակերպության անդամությունից հեռացումը կատարվում է Նախագահի որոշմամբ:

25. Կազմակերպության անդամների համար անդամավճար չի սահմանվում:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

26. Կազմակերպության անդամն իրավունք ունի՝

1) ընտրել և ընտրվել Կազմակերպության կառավարման մարմիններում,

2) ներկա գտնվել Կազմակերպության բարձրագույն մարմնին՝ ժողովին անձամբ,

3) ծանոթանալու Կազմակերպության մարմինների արձանագրություններին, ստանալու նրանց ընդունած որոշումների պատճենները,

4) վերադասության կամ դատական կարգով բողոքարկելու Կազմակերպության մարմինների որոշումները: Կազմակերպության անդամի կողմից գործադիր մարմնի որոշումների բողոքարկումն իրականացվում է ժողովին համապատասխան դիմում ներկայացնելու եղանակով,

5) Կազմակերպությունից պահանջելու տեղեկություններ, ստանալու փաստաթղթերի պատճեններ՝ Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, մարմինների արձանագրությունների, որոշումների, գույքի կառավարումից ստացված դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալու նրա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացության պատճենը, որոնք վերաբերում են վերջին երեք տարիներին,

6) անվճար օգտվել Կազմակերպության ծառայություններից:

27. Կազմակերպության անդամը պարտավոր է՝

1) կատարել Կազմակերպության կանոնադրական պահանջները և կառավարման մարմինների որոշումները,

2) բարեխղճորեն կատարել կառավարման մարմինների որոշմամբ իր վրա դրված պարտականությունները:

28. Կազմակերպության կանոնադրական պահանջները խախտելու կամ Կազմակերպության կառավարման մարմինների որոշմամբ իր վրա դրված պարտականությունները չկատարելու դեպքում Կազմակերպության անդամի

նկատմամբ Կազմակերպության նախագահի կողմից կարող են կիրառվել կարգապահական տույժի միջոցներ՝ նկատողության կամ Կազմակերպության անդամությունից հեռացնելու ձևով:

7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԸ ԵՎ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ

29. Կազմակերպությունը կարող է իր նպատակներին համապատասխան աշխատանքներում ներգրավել կամավորների:

30. Կազմակերպության կողմից մատուցվող ծառայություններից կարող են օգտվել 18-ից 65 տարեկան մտավոր խնդիրներ ունեցող անձիք (այսուհետ՝ շահառուներ), ի շահ որոնց իրականացվում է Կազմակերպության գործունեությունը:

31. Կազմակերպության կողմից կամավորներ ներգրավելու իրավահարաբերությունների նկատմամբ կիրառվում են «Բարեգործության մասին» ՀՀ օրենքը և ՀՀ աշխատանքային օրենսգիրքը:

32. Եթե կամավորի աշխատանքի տևողությունը գերազանցում է շաբաթական 20 ժամը, ապա Կազմակերպությունը կամավորների հետ կնքում է կամավոր աշխատանքի մասին պայմանագիր, որը համաձայնություն է կամավորի և Կազմակերպության միջև: Պայմանագրի հիման վրա կամավորն իր կամքով, առանց վարձատրության և որոշակի ժամկետով իրականացնում է կամավոր աշխատանք, իսկ Կազմակերպությունն ապահովում է կամավոր աշխատանքի իրականացման համար անհրաժեշտ, անվտանգ և առողջության համար անվնաս պայմաններ:

33. Արգելվում է կամավորներին ներգրավել Կազմակերպության ձեռնարկատիրական գործունեության մեջ:

8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

34. Կազմակերպության կառավարման մարմիններն են ժողովը և գործադիր մարմինը՝ Նախագահը:

35. Կազմակերպության գործունեությանն առնչվող ցանկացած հարցի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու իրավունքը պատկանում է Կազմակերպության բարձրագույն մարմնին՝ ժողովին:

36. Կազմակերպության հերթական ժողովը գումարվում է հինգ տարին մեկ անգամ: Կազմակերպության հերթական ժողովը հրավիրում է Նախագահը՝ անդամների համատեղ հավաքի ձևով կամ հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ՝ կազմելով համապատասխան արձանագրություն: Նախագահը որոշում է ժողովի անցկացման օրը, ժամը և վայրը, ինչպես նաև ժողովի օրակարգի նախնական տարբերակը և այդ մասին ոչ ուշ, քան 20 օր առաջ պատվիրված նամակով կամ էլեկտրոնային եղանակով կամ զանգվածային լրատվության միջոցներով կամ օրենքով սահմանված այլ եղանակներով ծանուցում է կազմակերպության անդամներին և կառույցներին:

37. Կազմակերպության արտահերթ ժողով հրավիրվում է Նախագահի կամ Կազմակերպության անդամների առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ՝ Նախագահի կողմից:

38. Կազմակերպության արտահերթ ժողովը գումարվում է վերոնշյալ նախաձեռնությունից ոչ ուշ, քան 5 օրվա ընթացքում: Արտահերթ ժողով գումարելու ժամանակի և վայրի մասին ժողովի մասնակիցները ծանուցվում են արտահերթ ժողով անցկացնելու օրվանից առնվազն 5 օր առաջ:

39. Ժողովի բացառիկ իրավասության հարցերն են՝

1) Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, լրացումների կամ նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատումը,

2) այլ իրավաբանական անձի ստեղծման կամ այլ կազմակերպությունում Կազմակերպության մասնակցության մասին որոշման ընդունումը,

3) Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ ստեղծելու և դրանց կանոնադրությունները հաստատելու մասին որոշումների ընդունումը,

4) Կազմակերպության կառուցվածքի հաստատումը,

5) Կազմակերպության Նախագահի ընտրությունը և փոփոխումը,

6) Կազմակերպության Նախագահի վարձատրության կարգի և պայմանների սահմանումը,

7) Կազմակերպության աուդիտն իրականացնող անձի ընտրությունը, եթե օրենքի համաձայն կազմակերպությունը ենթակա է պարտադիր աուդիտի,

8) Կազմակերպության ռազմավարության հաստատումը, եթե Կազմակերպությունը նախատեսում է ունենալ ռազմավարություն,

9) հինգ տարին մեկ անգամ գործադիր մարմնի կողմից ժողովի գումարմանը նախորդող տարիների ընթացքում հաստատված Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունների հաստատումը,

10) Կազմակերպության մարմինների՝ իրավական ակտերի պահանջներին և կանոնադրությանը հակասող որոշումների գործողության դադարեցումը,

11) Կազմակերպության վերակազմակերպման մասին որոշման ընդունումը,

12) Կազմակերպության լուծարման (բացառությամբ դատարանի վճռով լուծարվելու դեպքերի) մասին որոշման ընդունումը,

13) օրենքով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:

40. Ժողովն իրավազոր է, եթե գումարվել է օրենքին և Կազմակերպության կանոնադրությանը համապատասխան, և ժողովին մասնակցում է Կազմակերպության բոլոր անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Ժողովի որոշումներն ընդունվում են Կազմակերպության Ժողովին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ: Ժողովի արձանագրությունը ստորագրում են ժողովի նախագահողը և քարտուղարը: Ժողովի արձանագրությունները պահպանվում են 5 տարի:

41. Նախագահն ընտրվում է ժողովի կողմից հինգ տարի ժամկետով: Կազմակերպության գործադիր մարմինը Կազմակերպության նախագահն է: Նախագահը ղեկավարում է Կազմակերպության ընթացիկ գործունեությունը և վարում է ժողովի նիստերը:

42. Նախագահի իրավասությունները ներառում են Կազմակերպության ընթացիկ գործունեության կառավարման, ինչպես նաև Կազմակերպության կառավարման մարմինների գործունեությունն ապահովելուն ուղղված բոլոր հարցերը:

43. Նախագահը Կազմակերպության կանոնադրությանը և ժողովի որոշումներին համապատասխան՝

1) ապահովում է ժողովի որոշումների կատարումը,

2) տնօրինում և կառավարում է Կազմակերպության ցանկացած տեսակի և չափի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Կազմակերպության անունից,

3) ներկայացնում է Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,

4) տալիս է լիազորագրեր,

5) բանկերում բացում է Կազմակերպության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ,

6) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

7) հաստատում է կազմակերպության հաստիքացուցակը և տարեկան ծախսերի նախահաշիվը,

8) հաստատում է Կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը, այդ թվում՝ նրա առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ներքին կարգապահական և այլ կանոնները,

9) հաստատում է Կազմակերպության, ինչպես նաև նրա մարմինների հաշվետվությունները,

10) հաստատում է ժողովների գումարմանը նախորդող տարիների Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները, որոնք հինգ տարին մեկ անգամ ներկայացնում է Ժողովի հաստատմանը,

11) ընդունում է Կազմակերպության անդամ և հեռացնում Կազմակերպության անդամությունից,

12) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

44. Նախագահն իր լիազորություններն իրականացնելիս Կազմակերպության անունից հանդես է գալիս առանց լիազորագրի:

45. Նախագահը կրում է օրենքով նախատեսված պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, Կազմակերպության կանոնադրության, ժողովի

որոշումների կամ կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

9. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

46. Կազմակերպությունը կարող է լուծարվել Ժողովի որոշմամբ կամ դատարանի վճռով:

47. Ժողովը կազմավորում է լուծարային հանձնաժողով և օրենքով նախատեսված կարգով սահմանում լուծարման կարգն ու ժամկետները: Կազմակերպության լուծարման ավարտին լուծարային հանձնաժողովը պարտադիր վճարումներն իրականացնելուց հետո մնացած գույքը Ժողովի որոշմամբ սահմանված կարգով օգտագործում է Կազմակերպության կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար, իսկ եթե դա հնարավոր չէ, փոխանցում է պետական բյուջե:

48. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել Ժողովի որոշմամբ կամ օրենքով սահմանված դեպքերում դատարանի վճռով՝ օրենքով սահմանված կարգով:

10. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԸ

49. Կազմակերպությունը կարող է ունենալ՝ խորհրդանիշ, առանձնացված գույք, ինքնուրույն հաշվեկշիռ, հայերեն, անգլերեն, ռուսերեն անվանումներով կլոր կնիք, դրոշմ, հաշվարկային հաշիվ բանկում՝ ՀՀ և օտարերկրյա արժույթով:

Սույն կանոնադրությունը կազմված է 03.07.2019թ. և բաղկացած է 11 թերթից: